ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Դ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունը, ինչպես հայտնի է, քաղաքական հրապարակախոսության առաջնեկն է հայ իրականության մեջ։ Հեղինակը խնդիր է ունեցել հորդորել հայ երիտասարդությանը՝ ինքնագիտակցության գալ և ոտքի կանգնել ազատագրական պայքարի՝ վերականգնելու հայ ժողովրդի կորցրած քաղաքական անկախությունը։ Նա իր նպատակը հստակ ձևակերպել է գրքի տիտղոսաթերթում. «Շարադրեալ սակս սթափելոյ երիտասարդացն, և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան»։ Գիրքը հրատարակվել է Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1772 թ., Շահամիր Շահամիրյանի տպարանում, նրա անմիջական նախաձեռնությամբ։

Գիրքը լույս տեսնելուց հետո Շահամիրյանը նրանից մի օրինակ ուղարկել է Էջմիածին, Սիմեոն Երևանցի կաթողիկոսին։ Վերջինս, երբ ստացել է «Յորդորակը» և ծանոթացել նրա բովանդակության հետ, սարսափահար, անմիջապես նամակ է ուղարկել Շահամիրյանին և պահանջել անհապաղ հավաքել գրքի ողջ տպաքանակը և այրել։ Նա մեղադրել է Շահամիրյանին այն բանի համար, որ առանց իր թույլտվության տպարան է հիմնել և անցանկալի գրքեր է հրատարակում։ Կաթողիկոսը բանադրել է նաև Մովսես Բաղրամյանին՝ արգելելով նրա հետ փոխհարաբերություն ունենալը։

Իր կոնդակում Սիմեոն Երևանցին Շահամիրյանին ներկայացրել է հետևյալ վեց պահանջները. «Նախ՝ զի գիրքն զայն այրեսցէ իսպառ, և որս ցրուեալ է աստ և անդ՝ ջանասցէ և հնարեսցէ՝ զայնս ևս այրել։ Երկրորդ՝ զի տպագրատունն զայն խափանեսցէ իսպառ ...Երրորդ՝ այդպիսի վնասաւոր բանիւք այլ մի գրէք, ասէ, զթուղթս առ մելիքսն Խամսայու։ Զի յերթևեկութենէ թղթոցն ձերոց ձայն ինչ վեր ելանէ, ասէ, թերևս և կամ թուղթն ձեր ի ձեռս տաճկաց անկանի, որ լինի վնաս աղգիս։ Չորրորդ՝ պատուէր զի անօգուտ մտածմունս այլ մի ևս արասցեն և մի հետևեսցին ոկնի նորին, որ անօգուտ է և ի նանիր։ Հինգերորդ՝ զի խաբերայ Մովսէսն այն կամ վանեսցեն ի միջոյ իւրեանց, և կամ ի տեղի ոչնչի համարելով՝ մի մերձեսցուցեն առ ինքեանս ...Վերջապէս, բանադրանք այն չիք Մովսիսին և պատուէր՝ զի մի հաղորդեսցի նմա բանիւ կամ գործով և կցորդեսցի անիծից և դատապարտութեանց նոյին»[1]։

Պատմաբաններին զարմանք է պատճառել Սիմեոն Երևանցու ցուցաբերած այսպիսի խստությունը։ Հայտնի է, որ նա Էջմիածնի կրթված, գործունյա և շրջահայաց դահակալներից մեկն է եղել, հեղինակ է հանդիսացել փիլիսոփայական, տոմարական և աստվածաբանական մի շարք աշխատությունների, կազմել է «Ջամբռ» վերնագրով վավերագրերի արժեքավոր ժողովածուն, բա-

---

1 «Դիւան Հայոց պատմութեան», հատ. Դ, Թիֆլիս, 1894, էջ 31։

ընդունել է հայկական տոմարը և այդ առթիվ գրել «Պարզաբանութիւն տոմարին Հայոց» աշխատությունը։ Նա է հիմնել Էջմիածնի տպարանը, որն առաջինն էր Հայաստանում, բաց է արել թղթի գործարան և կատարել օգտակար այլ գործեր։

Չի կարելի նաև ասել, թե նա անտարբեր է գտնվել հայ ժողովրդի ազատագրության գործի նկատմամբ. հայտնի է, որ հետևելով Հակոբ Ջուղայեցու քաղաքականությանը, Սիմեոն Երևանցին դիվանագիտական փոխհարաբերությունների մեջ է մտել ռուսական արքունիքի հետ, հիմնել Ռուսաստանի թեմական առաջնորդությունը և Եկատերինա կայսրուհուց ստացել 1768 թ. հուլիսի 30-ի նշանավոր հրովարտակը, որի մեջ կայսրուհին խոստանում էր իր հովանավորության տակ վերցնել և պաշտպանել հայ ժողովրդին[2]։ Սիմեոն Երևանցին այնքան է ոգևորված եղել այս հրովարտակով, որ մաղթանքի օրհնագիր է հեղինակել՝ նվիրված ռուսական կայսրերի արևշատության՝ «Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց» խորագրով, հանձնարարել է այն կարդալ Ռուսաստանի բոլոր հայկական եկեղեցիներում[3]։

Արդ, ինչպե՞ս բացատրել «Յորդորակի» նկատմամբ Սիմեոն Երևանցու արտակարգ բացասական դիրքը։

Իրողությունն այն է, որ եթե Հնդկաստանում և Ռուսաստանում պարսկական և թուրքական իշխանությունների դեմ կարելի էր ցանկացած կոչը հրապարակել և տարածել, նույնը չէր կարելի անել Հայաստանի իրականության մեջ, քանի որ թուրքական և պարսկական գործակալները վխտում էին ամենուրեք. բավական է, որ նրանց հայտնի դառնար, թե հայկական շրջաններում ապստամբության կոչեր են արվում, կասկած լինել չի կարող, որ հայերի դեմ կձեռնարկվեին անլուր հալածանքներ։ Այդ շատ լավ էր հասկանում Սիմեոն Երևանցին և համոզված էր, որ այդպիսի դեպքում չէր լինելու մեկը, որ բոներ պարսիկ և թուրք իշխանավորների ձեռքը։ Այդ տեսանկյունից հասկանալի է դառնում կաթողիկոսի ցուցաբերած արտակարգ զգուշավորությունը։

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող կաթողիկոսական դիվանի վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Սիմեոն Երևանցին, տարիներ հետո, փոխել է «Յորդորակի» նկատմամբ իր ունեցած վերաբերմունքը և հատուկ կոնդակով արդարացրել Շահամիրյանին ու վերացրել Մովսես Բաղրամյանի բանադրանքը։ Այդ երևում է Մատենադարանի № 3738 ձեռագրի մի վավերագրից, որը Սիմեոն կաթողիկոսի հաջորդ Ղուկաս կաթողիկոսի գրությունն է՝ ուղղված Հնդկաստանի Կալկաթա քաղաքում գտնվող Էջմիածնի պատվիրակ Գրիգոր վարդապետին և գրված է 1781 թ. մարտի 15-ին։ Դրանից երևում է, որ երբ Գրիգոր վարդապետը գտնվելիս է եղել Մադրասում և տեսակցություն է ունեցել Շահամիրյանի հետ, վերջինս իրեն է հանձնել Սիմեոն կաթողիկոսի բանադրական գրությունը։ Նվիրակը վերցրել է այն առանց այդ մասին կաթողիկոսարանի համաձայնությունն ունենալու։ Եվ ահա նվիրակը նամակ է ուղարկել Էջմիածնի միաբանության անդամ Մկրտիչ վարդապետին և հարցում արել՝ թե արդյոք ճիշտ է վարվել ինքը։ Մկրտիչ վարդապետն այդ մասին հայտնել է Ղուկաս կաթողիկոսին։ Վերջինս անձամբ պատասխանել է նվիրակին և արդարացրել նրա վարմունքը։

---

2 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7788։

3 Նույն տեղում։

Նա հայտնել է, որ Սիմեոն կաթողիկոսը, առանձին կոնդակով արդեն արդարացրել է Շահամիրյանին և վերցրել Բաղրամյանի բանադրանքը։ Ղուկաս կաթողիկոսը, սակայն, կասկածելով, որ Սիմեոն Երևանցու այդ կոնդակը կարող է տեղ հասած չլինել, անհրաժեշտ է համարել իր գրության հետ նվիրակին ուղարկել Սիմեոն Երևանցու կոնդակի պատճենը։ Ստորև բերում ենք Ղուկաս կաթողիկոսի՝ Հնդկաստանի էջմիածնական նվիրակ Գրիգոր վարդապետին ուղարկած գրության այն հատվածը, որը վերաբերում է Շահամիրյանին և Մովսես Բաղրամյանին։

«Այլև՝ որ գրել էիր մեր Մկրտիչ վարդապետին վասն լուսահոգւոյ մեղադրանաց թղթոյն, զոր գրեալ էր յառաջագոյն առ պարոն Շահամիր աղայն, թէ՝ «Եթ ինձ և ես առի, թէպէտ՝ այլ թէ չկամիցիք, յետս յղեցից» և այլն։ Գիտեա առ այդ. զի լուսահոգին (խոսքը Սիմեոն կաթողիկոսի մասին է—Ա. Ա.) քանիցս անգամ յետ այնորիկ գրեաց զթուղթս օրհնութեան և մխիթարութեան և շահեցողութեան առ պարոն Շահամիր աղայն։ Եւ մանաւանդ՝ նա վասն Բաղրամեան Մովսէսին արձակման գիր էր խնդրեալ, լուսահոգին զայն ևս գրեալ յղեաց յանցեալ ամին, որպէս ահա տեսանելոց ես ի յօրինակն գրոյ լուսահոգւոյն՝ զոր այժմ առ քեզ յղեցաք *(ընդգծումը մերն է—Ա. Ա.)։ Ուրեմն շատ լաւ ես արարեալ զայն մեղադրական թուղթն առնուլդ, զոր և բերցես ընդ քեզ։ Եւ թէ յայդմ կողմանէ գիտցես՝ թէ նա ունի մրտմրտունս ինչ, թղթով միամտացուսցես, զի լուսահոգին ահա քանի գրով զինք շահեալ զարձակման թուղթն ևս յղեալ է վասն Մովսէսին, որպէս ասացաք։ Նաև վասն տօնացոյցին որ Բձ (200) ռուպի է տուեալ, յետ քանի աւուրց դրելոց եմք առ նա թուղթ՝ ընդ այլ ևս բաղում թղթոց, դրելոց եմ վասն այնր յատուկ շնորհակալութիւն»*[4]։

О СНЯТИИ ОТЛУЧЕНИЯ МОВСЕСА БАГРАМЯНА

Доктор историч. наук А. Г. АБРАМЯН

(Резюме)

В 1772 г. в типографии Шаамира Шаамиряна в городе Мадрас (Индия) была напечатана книга армянского патриота Мовсеса Баграмяна «Новая тетрадь, называемая Увещеватель». Автор книги поставил себе целью поднять армянский народ на освободительную борьбу против иноземных завоевателей. Эчмиадзинский католикос Симеон Ереванци, получив экземпляр этой книги и опасаясь ее нежелательных последствий, отлучил Мовсеса Баграмяна от армянской церкви и обвинил Шаамиряна в неосмотрительности.

При изучении архивных документов Эчмиадзинского католикосата, хранящихся в Матенадаране им. Маштоца, нам удалось выявить документ, из которого явствует, что католикос Симеон Ереванци в дальнейшем пересмотрел свое решение об отлучении Баграмяна.

---

4 *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3738, էջ 13բ (նաև՝ ձեռ. № 4481, էջ 78ա)։*